

## ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Գոաժ Յիպպելին ևս իւր օդապարիկը. — Գոաժ Յեպպելինը այժմ մօտ 70 տարեկան է բայց դեռ շատ ժիր և պնդակազմ ծերունի է, որ իւր արտաքինով 50 տարեկանի տպաւորութիւն է անուամբ Գոանսպրուսական պատերազմի սկզբում Գոաժը, որ այն ժամանակ ռոտմիստր էր, աչքի էր ընկնում իւր չափազանց քաջութեամբ:

Պատերազմը վերջանալուց յետոյ նա թողեց ծառայութիւնը և լուրջ կերպով սկսեց զբաղուել օդազնացութեամբ: Նորա փորձերը 30 տարի անընդհատ շարունակուեցին:

Օդապարիկի շինութեան միջոցին իւր ամբողջ ուշադրութիւնը Գոաժ Յեպպելինը դարձրեց օդապարիկի ուղղութիւն տալու, օդային հոսանքները օգտակար կերպով գործադրելու վերայ. և Գոաժի փորձերը անհետեանք չմնացին: Նորա օդապարիկը բաղկացած է երկայն, բարակ կմախքից, որի երկարութիւնն է 111 մետր. և իւր մեծութեամբ գերազանցում է բոլոր մինչև այժմ եղած թռուցիկ մեքենաները: Օրինակ Թիֆառի օդապարիկը 44 մետր երկարութիւն ունէր Ցեսսաննաինը—28 Շվարցինը—47 և Կոերսինը որ ամենամեծն էր 50 մետր. Յեպպելինի օդապարիկը կազմուած է միքանի նաւակներեց և այնպէս որ մէկի փչանալը ամբողջ օդապարիկի ընթացքին չի կարող խանգարել: Օդապարիկն էլ կազմուած է 17 մանր պարիկերից, որոնք բոլորը անիփոփուած են մի ընդհանուր ալիւսմանի ընդ մէջ: Մինչև անգամ այդ պարիկերից միքանիսի պայթելը նաւի համար վտանգաւոր չէ. այդպիսի դէպքում նաւը շատ դանդաղ ցած է իջնում: Ալիւսմանի բունը, որի մէջ տեղաւորուած են 17 մանր օդապարիկները շինուած է բարակ երկաթեայ թելից և նման է սարգի ոստայնի:

Այս ցանցաւոր խողովակի տրամագիծն է 11 մետր, իսկ ծաւալը 11,000 քիլոկրամի:

Ներքեւը, նաւի տակ ամրացրած են երկու ալիւսմանի թերթից շինած մակոյկներ. որոնք միացրած են իրար հետ մի փոքր կամրջով, որ օդազնացութեան միջոցին մի նաւակից միւսն անցնելու հնարաւորութիւն է տալիս: Իւրաքանչիւր մակոյկի մէջ կայ 25 ձիու ոյժ ունեցող շարժիչ մեքենայ, այդ մեքենաները ամրացրած են նաւի առաջի և ետևի մասերին Բացի սորանից, ալիւսմանի զլանակի երկու կողմերում կան երկու օդային պտուտակներ, որոնք ծառայում են նաւի ղեկավարութեան և նորան կողմնակի ընթացք տալու համար: Նաւը ղեկավարելու համար բացի դորանից կան նաև երկու մեծ ղեկեր, Ընթացքը բաց անել եր-

կու պտուտակները 2-5 մետր տրամագիծ ունին և կարող են 1200 պտոյտ անել մի վարկեանում, որով նաւը մի վարկեանում 64 մետր տարածութիւն անցնելու չափ արագութիւն է ստանում: Կարիք եղած ժամանակ նաւին կարելի է ամրացնել ուրիշ մակոյկներ ևս, պաշարեղէնի համար:

Որպէս շարժիչ ոյժ ծառայում է բենզինը, որ բոլորովին անվտանգ ամանների մէջ է պահուում և վառուում է, պայթիւն յառաջ բերելուց խուսափելու համար, ելեքզրականութեամբ:

Յեպպելինի նաւի յառաջ բերած ոյժը հաւասար է 30 ձիու ոյժի, ուրեմն և նորա նաւի ոյժը գերազանցում է իր նախորդների պատրաստած նաւերի ոյժից: Այսպէս օրինակ Թիֆառը ստանում էր 3, 6, Ռենաս և Կոերս 8, 5 և Շվառց 12 ձիու ոյժ:

Յուլիսի 2 ին սկսեցին բարձրանալու պատրաստութիւններ տեսնել: Երեկոյեան ժամը 8 ին օդապարիկը դուրս հանեցին և հնարողը միանգամ ևս դիտեց նորա մեքենան: Այնուհետև օդային նաւի մակոյկի մէջ նստեցին Գոաժ Յեպպելինը բառոն Բաստոնը, երկու մեքենավարներ և Վոլֆը: Օդապարիկը, որին 100 զինուոր 30 պարաններով պահում էին, գետնի երեսից 30 մետր բարձրացաւ: Ոչ ոք չէր սպասում նաւի թռչելուն երբ լսուեց «թողէք» հրամանը և օդապարիկը ոգևորեցուցիչ «կեցցէ» աղաղակներով անյայտացաւ օդի մէջ:

Անկը և պտուտակը սկսեցին գործել: Օդապարիկը սկզբում դանդաղ էր բարձրանում մինչև որ պատահեց հարաւային թեթև քամու, որից յետոյ արագ սկսեց բարձրանալ և հասաւ 400 մետր բարձրութեան: Ամէն ինչ լաւ էր. բայց յանկարծ օդատարիկը սկսեց ցած իջնել, Առանձին մակոյկի մէջ գտնուող հրաւիրեալների սիրտը սաստիկ վախ ընկաւ երբ նորա նկատեցին որ ջրի վրայ են իջնում: Օդապարիկը ճշմարիտ որ արդէն զիպչում էր Բոգն լճի ջրին, Բայց շատ շուտով ցած թողին մի մակոյկ, որի մէջ և տեղաւորուեցին բոլոր ճանապարհորդները: Օդապարիկը ամենևին չվնասուեց, նորա արագ ցած իջնելու պատճառը, հնարողի ասելով, օդապարիկի գործուածքի բաւականաչափ ամուր չլինելն է եղել:

